ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 19

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.09.2009 թ.-ի թիվ 1066-Ն որոշման 7-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, որոշում եմ.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող 06-104-0125-0015 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,37237 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել վարելահող գործառնական նշանակության:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 21թ. 01 22
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 20

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.09.2009 թ.-ի թիվ 1066-Ն որոշման 7-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, որոշում եմ.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող 06-027-0501-0001 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,09262 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել արոտ գործառնական նշանակության:

2 Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21 թ. 01 22
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 21

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշում եմ.

Գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ 2021թ. հունվարի 25-ին ժամը 11:00-ին համայնքապետարանի վարչական շենքում հետևյալ օրակարգով՝

1.Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ հունվարի 25ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3.«ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Գյուլագարակ համայնքի մանկապարտեզների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի արվեստի դպրոց ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6. Գյուլագարակ համայնքի 2021թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
7. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:
8.Հողամասերի նկատմամբ համայնքի սեփականությունը ճանաչելու մասին:
9.«Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20<u>21</u>թ. <u>01</u> <u>22</u>
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 22

ԿԱՐԻՆԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Կարինե Մաթևոսյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղում գործող ԱՁ Կարինե Մաթևոսյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021թ. 1-ին և 2-րդ եռամսյակների համար:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21 թ. 01 25
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 23

ԳՈՀԱՐ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Գոհար Այվազյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղում գործող ԱՁ Գոհար Այվազյանի հայտը, նրան տալ ծխախոտի և ոգելից, ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021թվականի 1-ին եռամսյակի համար:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021 թ. 01 25
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 24

ԱՇՈՏ ԹՈԹՈԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-104-0016-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԵԿԵՐԵՍԻ ՃՇՏՄԱՆ, ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0.06587 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԻ 0.17152 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Թոթոլյանի դիմումը, թիվ 30082019-06-0059 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» Ա/Ձ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010 թ.-ի թիվ 186-ն հրամանով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, որոշում եմ.

1. Հաստատել Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր բնակավայրում գտնվող 06-104-0016-0015 ծածկագրի հողամասի ընդհանուր մակերեսը 0,23739 հա, ըստ «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից տրամադրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

2.06-104-0016-0015 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,06587 հա հողամասի հասցեն՝ կենտրոնական փողոց, թիվ 107 բնակելի տուն:

3.06-104-0016-0015 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,17152 հա հողամասին տրամադրել նոր հասցե ՝ Կենտրոնական փողոց, թիվ 107/1 ջերմոց:

4.Օրինականացնել Աշոտ Թոթոլյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 06-104-0016-0015 կադաստրային ծածկագրից տարանջատված 0.06587 հա հողամասում կիսանկուղին կից 2020 թ.-ին ինքնակամ կառուցված՝ 40,92 քմ արտաքին մակերեսով կիսանկուղը, 2020թ.-ին ինքնակամ կառուցված 2,21 քմ արտաքին մակերեսով աստիճանավանդակը, 2020թ.-ին ինքնակամ կառուցված 2,40 քմ արտաքին մակերեսով աստիճանավանդակը, բնակելի տանը կից 2020 թ-ին ինքնակամ կառուցված 23,85 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 2020 թ.-ին ինքնակամ կառուցված 58.71 քմ արտաքին մակերեսով ամառային խոհանոցը, 2020թ.-ին ինքնակամ կառուցված 42.23 քմ արտաքին մակերեսով ձեղնահարկը, 2020թ.-ին ինքնակամ կառուցված 2,71 քմ մակերեսով պարիսպը, 2020թ.-ին ինքնակամ կառուցված 1,31 քմ մակերեսով պարիսպը, 2020թ.-ին ինքնակամ կառուցված 1.60 քմ մակերեսով պարիսպը, ինքնակամ բացվել է 3/երեք/ պատուհան և ինքնակամ փակվել է 1/մեկ/ դուռ:

5.Օրինականացման համար համայնքի բյուջե ենթակա է վճարման՝ 40.92 քմ արտաքին մակերեսով կիսանկուղի համար 22510 /քսաներկու հազար հինգ հարյուր տաս / ՀՀ դրամ, 2,21 քմ արաքին մակերեսով աստիճանավանդակի համար 1220/ մեկ հազար երկու հարյուր քսան / ՀՀ դրամ, 2,40 քմ արաքին մակերեսով աստիճանավանդակի համար 1320/ մեկ հազար երեք հարյուր քսան/ ՀՀ դրամ, 23,85 քմ մակերեսով բնակելի տան համար 13120/տասերեք հազար հարյուր քսան/ ՀՀ դրամ, 58,71 քմ մակերեսով ամառային խոհանոցի համար 19380/տասինը հազար երեք հարյուր ութսուն/ ՀՀ դրամ, 42,23 քմ մակերեսով ձեղնահարկի համար 13940/տասերեք հազար ինը հարյուր քառասուն/ ՀՀ դրամ, 2,71 քմ մակերեսով պարիսպի համար 900/ինը հարյուր/ ՀՀ դրամ, 1,31 քմ մակերեսով պարիսպի համար 450/չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, 1,60 քմ մակերեսով պարիսպի համար 530/հինգ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ, երեք բացվաց պատուհանի և մեկ փակված դռան համար 2200 / երկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 75570 /յոթանասունհինգ հազար հինգ հարյուր յոթանասուն / ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255000078 հաշվեհամարին: Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

6.06-104-0016-0015 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,17152 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը գյուտնտեսական արտադրական օբյեկտների:

7. Հողամասի կադաստրային արժեքների տարբերության վճար սահմանված չէ:

8.Հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

9.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

10. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21թ. 01 25

գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 25

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.09.2009 թ.-ի թիվ 1066-Ն որոշման 7-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, որոշում եմ.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող 06-029-0136-0003 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,48605 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոխել արոտ գործառնական նշանակության:

2 Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21թ. 01 25
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 26

ՍՄԲԱՏ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ԱԿՏ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2015թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Աշոտ Թոթոլյանի հայտը, որոշում եմ.

1.Աշոտ Թոթոլյանին տալ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնք գյուղ Վարդաբլուր Կենտրոնական փողոց թիվ 105 հասցեում կառուցված ջերմոցի շինարարության շահագործման փաստագրման ակտ:

2.Կառուցապատող Աշոտ Թոթոլյանին տրամադրել ավարտական ակտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21թ. 01 25
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 27

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 17-Ա որոշման 13.1-րդ կետը, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված Սարգիս Թաթուլի Գրիգորյանի հորը՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր բնակավայրի բնակիչ Թաթուլ Շալիկոյի Գրիգորյանին հատկացնել մեկ հարյուր հազար դրամի չափով սոցիալական օգնություն:
2. Այդ մասին ավագանուն առաջիկա նիստում ներկայացնել հաղորդում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21 թ. 01 25
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 28

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱՆԱԿԱՑՆԵԼՈՒ և ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյուլագարակ համայնքի բնակիչ Ալեքսանդր Սուրենի Գրիգորյանի դիմումը, պահեստի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» Ա/Ձ-ի կողմից կազմված տեղադրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝որոշում եմ.

1.Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 06-029-0001-0015 ծածկագրում գտնվող Ալեքսանդր Սուրենի Գրիգորյանի կողմից 2003 թվականին ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող՝ 58.33 քմ արտաքին մակերեսով պահեստը: Առանձնացնել զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի թվին չդասվող 58.3 քմ մակերեսով հողամասը համաձայն հավելվածի և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Գյուլագարակ համայնքի սեփականության իրավունքը:

2.Պահեստի համար անհրաժեշտ 58.3 քմ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը սահմանել համաձայն հատակագծի՝ պահեստարանների:

3. 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում սույն որոշման առաջին կետում նշված պահեստի և զբաղեցված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Ինքնակամ կառուցված պահեստը՝ չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն նշված կառույցը իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

6.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գ.Գյուլագարակ 5-րդ փողոց թիվ 8/1:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21 թ. 01 26
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 29

ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Շիրակ Ճշմարիտյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում գործող ԱՁ Շիրակ Ճշմարիտյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021թվականի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակների համար:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21թ. 01 26
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 30

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը, որոշում եմ.

Հաստատել Գյուլագարակ համայնքի 2021թ. տարեկան բյուջեի եռամսյակային բաշխման մեջ կատարված փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 21 թ. 01 26
գ.Գյուլագարակ